



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

PHCR

Primary Healthcare Reform Project

ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԿՈՏԱՅՔԻ, ՏԱԿՈՒՇԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ ԱՄՊ ԹԻՐԱՆԱՅԻՆ
ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2007



Դեկտեմբեր, 2008 թ.

ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակման մեջ արտահայտված հեղինակների կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄ

ԿՈՏԱՅՔԻ, ՏԱՎՈՒՇԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ ԱԱՊ ԹԻՐԱԽԱՅԻՆ
ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ

2007

ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակումն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագրի կողմից: Այստեղ արտահայտված հեղինակների կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Նախարան

Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱՄԲ) ծրագիրը ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) կողմից ֆինանսավորվող հնգամյա (2005-2010թթ.) ծրագիր է, որն իրականացվում է «Էներջինգ Մարկեթս Գրուփ» (ԷՄԳ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2005թ.-ի սեպտեմբերին շնորհված պայմանագրով: Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել առողջության առաջնային պահպանման կայուն և բարձրորակ ծառայությունների օգտագործումը՝ հօգուտ հայ ընտանիքների առողջության բարելավման: Այս նպատակն իրականացվում է՝ աջակցելով ՀՀ Առողջապահության նախարարությանը (ՀՀ ԱՆ) ներդնել փաթեթ՝ կազմված վեց միջոցառումներից, որոնք առողջապահական բարեփոխումները կապակցում են ծառայությունների մատուցման հետ այնպես, որ մեկը մյուսին լրացնելով՝ ստեղծեն սիներգիկ արդյունք: Նշված վեց միջոցառումները ներառում են. աջակցությունը առողջապահական բարեփոխումներին և քաղաքականությանը (այս միջոցառման բաղկացուցիչ մասն է բուժհաստատությունների վերանորոգումը և սարքավորումներով հագեցումը), բնակչության ազատ հավաքագրումը, ընտանեկան բժշկությունը, բուժօգնության որակի բարելավումը, առողջապահության ֆինանսավորումն ու բնակչության ուսուցումը, առողջության խթանումը և հիվանդությունների կանխարգելումը:

«Ինչպիսի՞ ներգործություն են ունենում այս միջոցառումները». սա հաճախ հնչող, սակայն հազվադեպ ֆինանսավորվող հարց է: Բարեբախտաբար, ԱՄԲ ծրագիրը ներդրել է մի գործընթաց, որը պատասխանում է «ներգործության» հարցին. մշակվել է վեց հարցաշարերից բաղկացած մի փաթեթ՝ ծրագրի առաջընթացը վերահսկելու և արդյունքները գնահատելու նպատակով: Այս հարցաշարերից երեքն ուղղված են բուժհաստատությունների գնահատմանը և նախատեսված են նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանության միջոցով ծրագրի ներգործության գնահատման համար առողջության առաջնային պահպանման (ԱՄԳ) 164 հաստատություններում և դրանց ուղեգրման բուժհաստատություններում: Մյուս երեք հարցաշարերը նախատեսված են Հայաստանի բնակչության շրջանում տեղի ունեցող փոփոխությունների գնահատման համար՝ կիրառելով նույն նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանությունը:

Այս հաշվետվությունն ամփոփում է Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի (2-րդ գոտի) առողջության առաջնային պահպանման թիրախային հաստատությունների կարողությունների ելակետային գնահատումը: Այս գնահատման արդյունքները կարող են կիրառվել ներքին պլանավորման համար: Դրանք նաև համեմատությունների հիմք են հանդիսանում 2-րդ գոտու բուժհաստատություններում ծրագրի ազդեցության հետազոտման համար:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնը, որը հանդիսանում է ԷՄԳ ենթակապալառուներից մեկը, ստանձնել է ԱՄԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման հիմնական պատասխանատվությունը: Սույն ուսումնասիրության հեղինակներն են Անահիտ Դեմիրճյանը, Օվիմար Հարությունյանը, Վարդուհի Պետրոսյանը և Սայթլ Թոմփսոնը: Հարկ ենք համարում շնորհակալություն հայտնել նաև Հռիփսիմե Մարտիրոսյանին և Նունե Տռուզյանին՝ ուսումնասիրության բոլոր փուլերում իրենց արժեքավոր մասնակցության համար, ինչպես նաև՝ մեր հարցազրուցավարներին (նպատակային մարզերի առողջության առաջնային պահպանման բժիշկներին)՝ տվյալների հավաքագրման գործում իրենց ցուցաբերած ջանքերի համար:

Վստահ ենք, որ այս ուսումնասիրության արդյունքներն արժեքավոր կլինեն ինչպես առավել տեղեկացված որոշումների կայացման միջոցով առողջապահական արդյունքների բարելավման, այնպես էլ՝ նոր ծրագրերի մշակման համար: Սույն հաշվետվությունն առկա է ԱՄԲ ծրագրի կայքում՝ www.phcr.am: Դրա վերաբերյալ մեկնաբանությունները և հարցերը կարող եք ուղարկել info@phcr.am ինտերնետային հասցեով:

Ռիչարդ Ա. Յոդեր
Ծրագրի ղեկավար, ԱՄԲ ծրագիր

Բովանդակություն

Հապավումների ցանկ	iv
1. Ներածություն	1
2. Մեթոդներ	3
3. Արդյունքներ	5
3.1 Կառուցվածք, կարողություններ, անձնակազմ	6
3.2 Ընտանեկան բժշկություն	9
3.3 Ազատ հավաքագրում, ֆինանսավորում և կառավարում	14
3.4 Բնակչության ուսուցում	19
3.5 Ամենաանհրաժեշտ կարիքներ	24
4. Եզրակացություն	24
Հավելված 1. ԱԱՊԲԾ, անբուլատոր բուժաստատությունների գնահատման հարցաթերթիկ	25
Հավելված 2. 2-րդ գոտու թիրախային բուժաստատությունների անձնակազմի կառուցվածքը	39
Հավելված 3. 2-րդ գոտու թիրախային բուժաստատությունների տարածքի սեփականությունը, օգտագործվող սենյակների, գործող ավտոմեքենաների, սանհանգույցների թիվը, էլեկտրականության առկայությունը	41
Հավելված 4. Սարքին սարքավորումների/մատակարարումների թիվը 2-րդ գոտու թիրախային բուժաստատություններում-1	43
Հավելված 5: 2-րդ գոտու թիրախային բուժաստատությունների լաբորատորիաների հագեցվածությունը	51
Հավելված 6: 2-րդ գոտու թիրախային բուժաստատություններում առկա կահույքի քանակը	53
Հավելված 7: Հեռավորությունը գնահատված ԲՄԿ/ԳԲԱ-ների և մարզ/ շրջկենտրոնների միջև	55
Հավելված 8. Շարունակական ԸԲ/ԸԲք դասընթացներում ներգրավված ԱԱՊ բուժաշխատողների թիվը	56
Հավելված 9. 2-րդ գոտու թիրախային բուժաստատությունների բուժանձնակազմի կարճատև վերապատրաստման դասընթացները	58
Հավելված 10. 2006թ. և 2007թ. փետրվար-մարտ ամիսներին 2-րդ գոտու թիրախային բուժաստատություններ կատարված այցերի թիվը	59
Հավելված 11. 2006թ. և 2007 թ. փետրվար-մարտ ամիսներին 2-րդ գոտու թիրախային բուժաստատությունների բուժաշխատողների կատարած տնային այցերի թիվը	61
Հավելված 12. Սպասարկվող բնակչության, տարեկան մահերի և հոսպիտալացումների թվերն ըստ հաստատությունների	63
Հավելված 13. Հղիությունների, ծննդաբերությունների, նորածնային մահերի, ծննդաբերության վայրերի և հաշմանդամների տարեկան թվերն ըստ հաստատությունների (2005, 2006 թթ.)	65
Հավելված 14. 2-րդ գոտու թիրախային բուժաստատություններից՝ երբևէ այլ կազմակերպությունների հետ ԱԱՊ ծրագրի մասնակցած հաստատությունների ցանկը	68

Հապավումների ցանկ

ԱԱԻ	Առողջապահության ազգային ինստիտուտ
ԱԱՊ	Առողջության առաջնային պահպանում
ԱԱՊԲ	Առողջության առաջնային պահպանման բարեփոխումներ
ԱԲ	Ապացուցողական բժշկություն
ԱԾՅԿ	Առողջապահական ծառայությունների հետազոտական և զարգացման կենտրոն
ԱԿ	Առողջության կենտրոն
ԱՅԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄԱՄ	Ամերիկյան միջազգային առողջապահական միություն
ԱՄԿՈՐ	Աջակցության միացյալ մեթոդիստական կոմիտե (անգլերեն անվանումից)
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԲԱ	Բժշկական ամբուլատորիա
ԲԱՍ	Բժիշկներ առանց սահմանի
ԲԲԲ	Բազային բժշկական քուլեջ
ԲՅԻ	Բաց հասարակության ինստիտուտ
ԲՄԿ	Բուժակ – մանկաբարձական կետ
ԳԲԱ	Գյուղական բժշկական ամբուլատորիա
ԳԺՂՄՅԻ	Գերմանական ժողովուրդների դաշնակցության միջազգային համագործակցության ինստիտուտ
ԴԲՏՓԿ	Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն
ԴՈԹՍ	Ուղղակիորեն վերահսկվող կարճաժամկետ բուժում (անգլերեն անվանումից)
ԵԽՄԿ	Երեխայի խնամքի միջազգային կազմակերպություն
ԵՊԲՅ	Երևանի պետական բժշկական համալսարան
ԷՄԳ	Էմերջինգ մարքեթս գրուպ (անգլերեն անվանումից)
ԸԲ	Ընտանեկան բժշկություն
ԸԲք	Ընտանեկան բուժքույրություն
ԸՊ	Ընդհանուր պրակտիկա
ԿՇՅ	Կենտրոնական շրջանային հիվանդանոց
ՀԱԿ	Համայնքային առողջության կոմիտե
ՀԱՅ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԲՈՒ	Հենակետային բժշկական ուսումնարան
ՀԾՓ	Հիմնական ծառայությունների փաթեթ
ՀԿԽՄ	Հայաստանի Կարմիր Խաչի միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՍԲԾ	Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիր
ՁԻԱՅ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԿ ՄՅ	Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՄԳ	Մոնիթորինգ և գնահատում
ՄԻԱԿ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄՅԻԿ	Մանկական հիվանդությունների ինտեգրված վարում
ՄՕԶ	Միջազգային օգնություն և զարգացում
ՆՕՎԱ	Նորարարություն և օժանդակություն վերարտադրողական առողջությանը
ՋՅ	Ջինիշյան հիմնադրամ
ՍԻՅ	Սրտի իշեմիկ հիվանդություն
ՍՇՅ	Սուր շնչառական հիվանդություններ
ՍԿ	Սեռավարակներ
ՎԿ	Վորլդ Վիժն

1. Ներածություն

1.1 ԱԱՊԲ ծրագրի մասին

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) հնգամյա պայմանագիր է կնքել «Էներջինգ մարքեթս գրուպ» (ԷՄԳ) միջազգային խորհրդատվական ընկերության հետ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների ծրագիրն իրականացնելու նպատակով: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել որակյալ առաջնային բուժօժանդությունների մատչելիությունը բնակչության համար՝ մի կողմից Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բուժաստատությունները և ընտանեկան բժիշկների/բուժքույրերի կարողությունները զորացնելու, մյուս կողմից՝ առողջական խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, բնակչության շրջանում բուժօգնության դիմելու մշակույթը զարգացնելու և ԱԱՊ ծառայությունների նկատմամբ պահանջարկը բարձրացնելու միջոցով: ԱԱՊԲ ծրագրի վեց հիմնական բաղադրիչներն իրականացվում են «ԻնտրաՅելթ Ինթերնեյշնլ» կազմակերպության, Հայաստանի ամերիկյան համալսարանի, «Օվերսիզ Ստրաթիջիք Քնսալթինգ» ընկերության և «Սոչլ Սեկտորզ Դիվելփմենթ Ստրաթիջիք» կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում՝ ներառելով հետևյալ գործողությունները.

- **Բարեփոխումների ընդլայնում.** օժանդակության տրամադրում կառավարությանը հետագա բարեփոխումների համար բարենպաստ իրավական դաշտ ստեղծելու հարցում, հանրապետության տարածքում գործող ԱԱՊ հաստատությունների վերանորոգում և վերազինում, բուժաստատությունների ղեկավարների համար կրթական դասընթացների մշակում և կազմակերպում:
- **Ընտանեկան բժշկություն.** Ժամանակակից կրթական ծրագրերի և նյութերի մշակում շարունակական բժշկական կրթության համար, ընտանեկան բժշկության անկախ խմբային պրակտիկաների հիմնում, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի ուսուցում:
- **Ազատ հավաքագրում.** ազատ հավաքագրման սկզբունքի ներդրում Հայաստանի առողջապահության համակարգում՝ բուժաշխատողների մրցակցության միջոցով սպասարկվողին ուղղված ծառայությունների զարգացմանը նպաստելու համար:
- **Բուժօգնության որակ.** բուժօգնության որակի բարձրացում որակի ժամանակակից ստանդարտների և որակի ապահովման գործընթացների ներդրման միջոցով, բուժաշխատողների լիցենզավորման և հավատարմագրման կանոնակարգերի ներդրում:
- **Առողջապահության ֆինանսավորում.** առողջապահությանը հատկացվող միջոցների բաշխման թափանցիկության և արդյունավետության բարձրացում ծառայությունների ինքնարժեքի հաշվարկի բարելավման և կատարողականի վրա հիմնված վարձատրության մեխանիզմների միջոցով, բուժաստատությունների մակարդակում հաշվետվության գործընթացի բարելավում, Առողջապահության ազգային հաշիվների կիրառման սահմանում:
- **Բնակչության ուսուցում.** տրամադրվող ԱԱՊ ծառայությունների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության բարձրացում, հասարակության կողմից բժշկի ազատ ընտրության գործընթացի ըմբռնման և ընտանեկան բժշկության գաղափարի ընկալման ապահովում, առողջ ապրելակերպի քարոզչություն և բուժօգնության դիմելու մշակույթի զարգացում:

Ծրագիրն իրականացվում է շրջանային ընդլայնման սկզբունքով, որը թույլ է տալիս ապահովել բարեփոխումների աստիճանական ընդլայնումը ծրագրի գործունեության ընթացքում: Ծրագրի առաջնահերթ խնդիրներն են յուրաքանչյուր

շրջանում ընտրված բուժհաստատությունների ֆիզիկական պայմանների և բուժօժանայությունների տրամադրման բարելավումը: Այն համագործակցում է Հայաստանի տարբեր մարզերի մոտ երեք հարյուր բուժհաստատությունների հետ: Ծրագրի երկրորդ տարվա աշխատանքների համար թիրախային են հանդիսանում Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերը:

Թիրախային բուժհաստատություններում ծրագիրը բազմակողմանի միջոցառումներ է իրականացնում, այդ թվում՝ վերանորոգում, կահավորում և սարքավորումների տրամադրում, ինչպես նաև բուժաշխատողների և վարչական անձնակազմի վերապատրաստում ընտանեկան բժշկության, բուժօգնության որակի, կառավարման, ֆինանսավորման/հաշվետվության վերաբերյալ, հաշվապահական համակարգչային ծրագրերի, ազատ հավաքագրման և ըստ կատարողականի վարձատրության համակարգերի ներդրում և այլն: Ծրագրի թիրախ են հանդիսանում նաև ընտրված բուժհաստատությունների կողմից սպասարկվող համայնքները, հատկապես ԱԱՊԲ ծրագրի բնակչության ուսուցման բաղադրիչի առումով, ինչը ենթադրում է այդ համայնքներում առողջապահական կոմիտեների հիմնում և օժանդակություն դրանց աշխատանքներին, փոքր դրամաշնորհների հատկացում և այլն: Սակայն, ընտրված ոչ բոլոր բուժհաստատություններում է, որ թվարկված միջոցառումներն իրականացվում են ողջ ծավալով. տարբեր բուժհաստատություններում ներդրվող միջոցառումների համալիրը կարող է տարբեր լինել կախված տեղի պահանջներից և առաջնահերթություններից:

1.2 ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան

Ծրագրի իրականացման մոնիտորինգի և ազդեցության գնահատման նպատակով իրականացվում են գնահատման հետևյալ գործողությունները.

1) Ելակետային գնահատում, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի թիրախային բուժհաստատությունների նախածրագրային գնահատումներ, որոնք ներառում են. 1) հարցազրուցավարի կողմից կատարվող բուժհաստատության գնահատում, որն անդրադառնում է ծրագրի բոլոր բաղադրիչների կառուցվածքային չափորոշիչներին, որոնցից մի քանիսը ծրագրի կատարողականի մոնիտորինգի պլանի չափորոշիչներ են, 2) բուժհաստատության կատարողականի գնահատում, որն անդրադառնում է բուժհաստատության և բուժաշխատողների գործունեությանը և կարող է հիմք հանդիսանալ բուժսպասարկման որակի բարելավման գնահատման համար (ի տարբերություն 1-ին գոտու բուժհաստատությունների կատարողականի գնահատման ժամանակ կիրառված ինքնագնահատման մեթոդի, 2-րդ գոտու բուժհաստատությունների կատարողականի գնահատման ժամանակ կիրառվել է հարցազրուցավարի կողմից իրականացվող գնահատում: Հարցաթերթիկը համապատասխանաբար փոփոխվել է և ավելացվել են մի քանի նոր հարցեր, այդ թվում՝ բուժաշխատողների կատարողականի գնահատման առանձին հարցեր), 3) Սպասարկվողների բավարարվածության հարցում:
- Բնակչության ելակետային հարցում, այն է՝ ընտանիքների առողջության ուսումնասիրություն հանրապետության ողջ տարածքում, որն անդրադառնում է հարցվողների առողջական վիճակի և դրա փոփոխությունների ինքնագնահատմանը, վաղ ախտորոշիչ և կանխարգելիչ ծառայություններից օգտվելուն, բուժօգնության հասանելիությանը և հարցվողների կողմից բուժօգնության որակի գնահատմանը, ինչպես նաև բնակչության առողջապահական կրթությանը (հանրային իրազեկման քարոզարշավների և համանման այլ միջոցառումների միջոցով, որոնց արդյունքում փոխվում են առողջության վերաբերյալ գիտելիքներն ու մոտեցումները, ինչպես նաև բուժօգնության դիմելու մշակույթը):

2) Միջանկյալ և վերջնական գնահատումներ, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի թիրախային բուժհաստատություններում ծրագրի աշխատանքների ավարտին կրկնակի անգամ կատարվում են վերոհիշյալ բոլոր գնահատումները:
- Բնակչության կրկնակի հարցում, որն անդրադառնում է ելակետային գնահատման մեջ ընդգրկված բոլոր ոլորտներին (կիրառվում են նույն հարցաշարերը):

Սույն հաշվետվությունն ամփոփում է Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի՝ ԱԱՊԲ ծրագրի երկրորդ տարվա աշխատանքների համար թիրախ հանդիսացող բոլոր բուժհաստատությունների կարողությունների գնահատման արդյունքները: Ելակետային այս գնահատման արդյունքում հավաքված տվյալները հիմք են հանդիսանում ներքին պլանավորման և ելակետային տվյալների համակարգ ստեղծելու համար՝ հետագայում 2-րդ գոտում ծրագրի ազդեցության գնահատման նպատակով:

2. Մեթոդներ

Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի թիրախային բուժհաստատությունների ընտրությունը կատարվել է համատեղ՝ ԱԱՊԲ ծրագրի աշխատակիցների և համապատասխան մարզերի առողջապահական վարչությունների կողմից: Սկզբում ընտրվել են վերանորոգման և կահավորման կարիք ունեցող բուժհաստատությունները: Վերանորոգման ենթակա բուժհաստատությունների ընտրությունը կատարվել է հետևյալ երկու խումբ չափանիշների հիման վրա.

i) Գյուղական բուժհաստատությունների ընտրության չափանիշներ

- (1) Հեռավոր տեղակայում
- (2) Համայնքի մասնակցություն և տեղական իշխանությունների ներգրավվածություն
- (3) Հատկացված տարածքի/շենքի առկայություն
- (4) Անձնակազմի՝ վերանորոգման և վերապատրաստման աշխատանքներին մասնակցելու ցանկություն
- (5) Սպասարկվող բնակչության թիվ/բնութագիր (մեծ թիվ, ռիսկի խմբեր, անապահով բնակչություն)

ii) Պոլիկլինիկաների ընտրության չափանիշներ

- (1) Առաջնային բուժօգնության բարեփոխումների միջոցառումներին մասնակցելու հաջողված փորձ նախկինում
- (2) Հետագայում իբրև ուսումնական վայր ծառայելու հնարավորություն և/կամ կլինիկական դասավանդողների առկայություն
- (3) Անկախ իրավական կարգավիճակ, ընդգրկված չէ օպտիմալացման ծրագրում
- (4) Սպասարկվող բնակչության բնութագիր (ռիսկի խմբեր, անապահով բնակչություն)

Վերջնական ընտրությունը կատարվել է մարզերի առողջապահական վարչությունների կողմից առաջարկված վերանորոգման ենթակա բուժհաստատությունների շենքերի ճարտարագիտական գնահատումից հետո: Վերանորոգման կարիք ունեցող բուժհաստատությունների (հիմնականում՝ գյուղական բուժակ-մանկաբարձական կետեր (ԲՄԿ) և բժշկական ամբուլատորիաներ (ԲԱ)) ընտրությունից հետո, իբրև ծրագրի թիրախային հաստատություններ, ընդգրկվել են

նաև այն բուժհաստատությունները, որոնց կցված են ընտրված ԲՄԿ-ներն ու ամբուլատորիաները (այսպես կոչված՝ «ուղեգրման հաստատությունները»)՝ ապահովելով ծրագրի համակցված, բազմակողմանի մոտեցման համապարփակ կիրառումը:

Ընտրված բուժհաստատություններում մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) թիմն իրականացրել է երկու տիպի գնահատում. հարցազրուցավարի միջոցով բուժհաստատության ելակետային գնահատում և բուժհաստատության/բուժաշխատողի կատարողականի գնահատում:

Ի տարբերություն 1-ին գոտում բուժհաստատությունների կարողությունների գնահատման, 2-րդ գոտում բոլոր տեսակի բուժհաստատությունների (ԲՄԿ, ԲԱ, առողջության կենտրոն (ԱԿ) կամ պոլիկլինիկա) ելակետային գնահատման համար կիրառվել է նույն հարցաշարը: Այդ հարցաշարը համատեղում է 1-ին գոտում կիրառված երկու հարցաշարերի (ԲՄԿ/ԲԱ-ների և ԱԿ/պոլիկլինիկաների համար) պարունակությունը (հավելված 1):

Հարցաշարն ընդգրկում է հետևյալ հիմնական ոլորտները.

- Բուժհաստատության կարգավիճակը և կառուցվածքը, այն է՝ անձնակազմը, ենթակառուցվածքները, սենյակները, սարքավորումներն ու կահույքը, դեղամատակարարման աղբյուրները, վերանորոգման վիճակը, ջրամատակարարումը, էլեկտրականության առկայությունը և ջեռուցումը, հեռավորությունները և փոխադրամիջոցները
- Բուժհաստատության ունեցած կարողություններն ու հնարավորությունները ԱԱՊԲ ծրագրի գործունեության հիմնական ոլորտներում՝ ընտանեկան բժշկության, բուժօգնության որակի, ազատ հավաքագրման, կառավարման ու ֆինանսավորման, աշխատուժի պլանավորման ու բնակչության առողջապահական կրթության
- Սպասարկվող բնակչության որոշ հիմնական առողջական ցուցանիշներ:

Գնահատումների իրականացման նպատակով (և՛ բուժհաստատությունների կարողությունների, և՛ դրանց կատարողականի) ուսուցանվել են երեք հարցազրուցավար Կոտայքի մարզում, երկուական՝ Տավուշի և Գեղարքունիքի (բոլորը եղել են տվյալ մարզի բժիշկներ): Ուսուցումը տևել է 2 օր և ներառել ինչպես տեսական բաղադրիչ, այնպես էլ՝ հարցաշարի գործնական կիրառում և հարցազրուցավարների/հարցաշարի նախնական փորձարկում: ԱԱՊԲ ծրագրի ՄԳ թիմը մշակել և հարցազրուցավարներին է տրամադրել հարցման իրականացման ուղեցույց, ընտրված հաստատությունների ծածկագրերի ցուցակներ և հարցումների մոտավոր ժամանակացույց: Մարզերում վարձվել են տեղական փոխադրամիջոցներ՝ հարցում իրականացնողներին համապատասխան բուժհաստատություններ տանելու համար: Երեք մարզերում էլ հարցումներն իրականացվել են մի քանի շաբաթվա ընթացքում (Կոտայքում՝ 2007թ. մայիսին, Տավուշում՝ 2007թ. մայիս-հունիս ամիսներին և Գեղարքունիքում՝ 2007թ. հունիսին): ՄԳ թիմը բոլոր երեք մարզերում կատարել է հարցման գործընթացի ընտրողական ստուգումներ՝ հարցումների համապատասխանությունը հետազոտության ընթացակարգին ապահովելու համար:

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի (ԱԾՀԿ) տվյալներ մուտքագրող թիմը հավաքված տվյալները մուտքագրել է համակարգչային տվյալների բազա՝ օգտագործելով SPSS 11.0 ծրագիրը: Բուժհաստատությունների ելակետային գնահատման այս փուլում հիմնականում կատարվել է նկարագրական վերլուծություն և կազմվել են յուրաքանչյուր բուժհաստատությանը վերաբերվող բազմազան տվյալներ պարունակող աղյուսակներ՝ ԱԱՊԲ ծրագրի տարբեր թիմերի առօրյա աշխատանքում օգտագործելու համար:

3. Արդյունքներ

2-րդ գոտում 2007թ. մայիսի վերջից մինչև հունիս գնահատվել են ընդհանուր թվով 56 ԱՊՊ բուժհաստատություն (29-ը՝ Կոտայքի, 14-ը՝ Գեղարքունիքի և 13-ը՝ Տավուշի մարզերում): Այդուսակ 1-ում ներկայացված է ելակետային գնահատման մեջ ներառված թիրախային բուժհաստատությունների ցանկը:

Այդուսակ 1. ԱՊՊԲ ծրագրի թիրախային բուժհաստատությունները 2-րդ գոտում

Վերանորոգման համար ընտրված բուժհաստատությունները	Վերանորոգման համար ընտրված բուժհաստատությունների ուղեգրման կենտրոնները
Կոտայքի մարզ	
1. Գետամեջի ԲՄԿ	17. Նոր Հաճնի պոլիկլինիկա
2. Գողթի ԲՄԿ	18. Գառնու ԱԿ
3. Ջրաբերի ԲՄԿ	19. Մայակովսկու ԲԱ
4. Կամարիսի ԲՄԿ	20. Գեղաշենի ԲԱ
5. Կաթնաղբյուրի ԲՄԿ	21. Արամուսի ԲԱ
6. Պտղնու ԲՄԿ	22. Վերին Պտղնու ԲԱ
7. Նոր Գյուղի ԲՄԿ	23. Կոտայքի ԲԱ
8. Նուռնուսի ԲՄԿ	24. Բյուրեղավանի ԱԿ
9. Ռադիոկայանի ԲՄԿ	25. Բալահովտի ԲԱ
10. Սարալանջի ԲՄԿ	26. Արագյուղի ԲԱ *
11. Սևաբերդի ԲՄԿ	27. Ջառի ԲԱ *
12. Թեղենիկի ԲՄԿ	28. Արգելի ԱԿ
13. Ջորավանի ԲՄԿ	
14. Ջովաշենի ԲՄԿ	29. Կապուտանի ԲԱ *
15. Ջովքի ԲՄԿ	30. Ջորաղբյուրի ԲԱ
16. Նոր Երզնկայի ԲԱ ¹	
Տավուշի մարզ	
1. Գոշի ԲՄԿ	10. Հաղարծնի ԲԱ
2. Ներքին Գոշի ԲՄԿ	
3. Հովքի ԲՄԿ	11. Իջևանի ԱԿ
4. Լուսահովտի ԲՄԿ	12. Խաչտարակի ԲԱ
5. Թովուզի ԲՄԿ	
6. Վ. Կարմիր Աղբյուրի ԲՄԿ	
7. Ծ. Ծաղկավանի ԲՄԿ	13. Պառավաքարի ԲԱ
8. Վարագավանի ԲՄԿ	
9. Ջորականի ԲԱ	
Գեղարքունիքի մարզ	
1. Աղբորկի ԲՄԿ ²	10. Շորժայի ԲԱ ²
2. Գետիկի ԲՄԿ	
3. Ախարածորի ԲՄԿ	11. Ծովակի ԲԱ
4. Մակենիսի ԲՄԿ	
5. Չկալովկայի ԲՄԿ	12. Սևանի պոլիկլինիկա
6. Գագարինի ԲՄԿ	
7. Ջաղացածորի ԲՄԿ	13. Վարդենիսի պոլիկլինիկա
8. Նորաբակի ԲՄԿ	
9. Ջովաքերի ԲՄԿ	14. Դոմաշենի ԲԱ

* Ընտրվել է նաև որպես վերանորոգման հաստատություն

¹ Նոր Երզնկայի ԲԱ-ն ընդգրկվել է թիրախային բուժհաստատությունների ցանկում և վերանորոգվել՝ 2-րդ գոտու ելակետային տվյալների հավաքումից և վերլուծությունից հետո:

² Աղբերք ԲՄԿ-ն և իր ուղեգրման կենտրոն Շորժա ԲԱ-ն հանվել են թիրախային բուժհաստատությունների ցանկից ելակետային տվյալների հավաքումից հետո:

Այս ցանկը ներառում է ինչպես վերանորոգման համար ընտրված բուժհաստատությունները (n=35), այնպես էլ՝ դրանց ուղեգրման հաստատությունները (n=21): Սակայն վերանորոգման համար ընտրված որոշ բուժհաստատությունների (Ձորավանի, Թովուզի, Վ. Կարմիրաղբյուրի և Գետիկի ԲՄԿ-եր) ուղեգրման հաստատություններ ներառված չեն եղել ելակետային գնահատման մեջ, քանի որ ենթակա են եղել վերակազմավորման՝ Առողջապահության նախարարության (ԱՆ) օպտիմալացման ծրագրի շրջանակներում:

3.1 Կառուցվածք, կարողություններ, անձնակազմ

Անձնակազմը

Թիրախային 56 բուժհաստատություններում աշխատել են ընդհանուր թվով 146 բժիշկ, 296 բուժքույր, 52 մանկաբարձուհի/բուժակ, 39 սանիտար և 85 ոչ բժշկական աշխատողներ: Ընդհանուր պրակտիկայում (ԸՊ՝ ընտանեկան բժշկություն, թերապևտիկ և մանկաբուժական ծառայություններ) ներգրավված են եղել ընդհանուր թվով 287 բուժաշխատող, որոնցից 31-ը՝ ընտանեկան բժիշկ, 27-ը՝ թերապևտ, 23-ը՝ մանկաբույժ, 44-ը՝ մանկաբարձուհի/ բուժակ, 129-ը՝ տեղամասային բուժքույր և 33-ը՝ ընտանեկան բուժքույր: ԲՄԿ-երի մեծ մասի (31-ից 21-ը) անձնակազմը բաղկացած է եղել ընդամենը մեկ բուժքրոջից կամ մանկաբարձուհուց: Հավելված 2-ում ներկայացված է թիրախային բուժհաստատությունների անձնակազմի մանրամասն կազմությունը:

Բուժհաստատության սեփականության իրավունքը

2-րդ գոտում ծրագրի թիրախ հանդիսացող 32 ԲՄԿ-ից միայն 12-ն (37.5%-ը) են եղել իրենց բուժհաստատության սեփականատերերը: Մյուսները կան վարձակալել են իրենց տարածքը (15-ը կամ 46.9%-ը), որպես կանոն, գյուղապետարանից, կան էլ ընդհանրապես տարածք չեն ունեցել (5-ը կամ 15.6%-ը. Նորաբակը՝ Գեղարքունիքի մարզում և Ջովաշենը, Նոր Գյուղը, Ջրաբերն ու Սարալանջը՝ Կոտայքում): Բժշկական ամբուլատորիաների մեծ մասը (17-ից 9-ը), ինչպես նաև Կոտայքի մարզում մեկ պոլիկլինիկա (Նոր Հաճն) և մեկ առողջության կենտրոն (Բյուրեղավան) նույնպես վարձակալել են իրենց տարածքը: Մնացածները եղել են իրենց շենքերի սեփականատերերը (Հավելված 3):

Սենյակները

Գնահատված 32 ԲՄԿ-երից 6-ը (19.4%-ը) չեն ունեցել օգտագործվող սենյակներ, իսկ 12-ը (38.7%-ը) ունեցել են միայն մեկ օգտագործվող սենյակ: Միայն երկու ԲՄԿ են ունեցել 2-ից ավելի օգտագործվող սենյակ (Գագարինավանի և Ջովաբերի ԲՄԿ-երը՝ Գեղարքունիքի մարզում): Օգտագործվող սենյակների միջին թիվը կազմել է 1.4՝ ԲՄԿ-երում (0-6 տատանման տիրույթով) և 4.5՝ ամբուլատորիաներում (1-9 տատանման տիրույթով): Սենյակների (օգտագործվող և չօգտագործվող) ընդհանուր թիվն ըստ հաստատության տեսակի տատանվել է ԲՄԿ-երում 0-ից 16-ի սահմաններում (միջինը՝ 2.1), իսկ ամբուլատորիաներում՝ 1-ից 13-ի (միջինը՝ 5.8): Գնահատված ԲՄԿ-երի երեք քառորդում հիմնական/զննման սենյակները վերանորոգված չեն եղել: Գնահատված ԲՄԿ-երի ավելի քան 75%-ում հիմնական/զննման սենյակների լուսավորությունը գնահատվել է բավարար: ԲՄԿ-երի հիմնական/զննման սենյակի միջին մակերեսը կազմել է 19 մ², 6-40 մ² տատանման տիրույթով: Մյուս սենյակները (եթե այդպիսիք եղել են) ավելի փոքր են եղել և դրանց միջին մակերես տատանվել է 9-14 մ² տիրույթում: Ամբուլատորիաներում օգտագործվող սենյակների վերանորոգման վիճակը գնահատվել է բավարար 41%-ում, իսկ լուսավորությունը՝ 88%-ում: Գնահատված ԳԲԱ-ների սենյակների միջին մակերեսը եղել է 16մ², 7-26 մ² տատանման տիրույթով:

Պոլիկլինիկաներում (ՊԿ) և առողջության կենտրոններում (ԱԿ) տեղեկություններ են հավաքվել միայն ընդհանուր պրակտիկայում (ԸՊ) օգտագործվող կաբինետների/ սենյակների մասին, ներառյալ ընտանեկան բժշկների, թերապևտների, ընդհանուր պրակտիկայի բժշկների և մանկաբույժների կաբինետները: 4 պոլիկլինիկաներում և 3 ԱԿ-ներում գնահատվել է ընդհանուր թվով 39 ԸՊ կաբինետ, որոնցից 38-ը բաղկացած են եղել մեկ սենյակից, մեկը՝ երկու սենյակից: Պոլիկլինիկաներում ԸՊ կաբինետների միջին թիվը կազմել է 6.8՝ 5-9 տատանման տիրույթով: Առողջության կենտրոններում ԸՊ կաբինետների միջին թիվը եղել է 4.3՝ 2-7 տատանման տիրույթով: Պոլիկլինիկաների կաբինետների վերանորոգման վիճակը գնահատվել է բավարար 48.1%-ում, իսկ առողջության կենտրոններինը՝ 66.7%-ում: Լուսավորությունը բավարար է գնահատվել համապատասխանաբար կաբինետների 88.9%-ում և 100.0%-ում: Ձննման սենյակների միջին մակերեսը պոլիկլինիկաներում եղել է 18 մ² (9-35 մ² տատանման տիրույթով), իսկ առողջության կենտրոններում՝ 15.4 մ² (11-22 մ² տատանման տիրույթով) (հավելված 3):

Էլեկտրամատակարարումը, ջեռուցումը, փոխադրամիջոցները

Շուրջօրյա էլեկտրամատակարարում եղել է միայն 18 ԲՄԿ-ում (66.7%), երեք ԲՄԿ (11.1%) էլեկտրամատակարարում ստացել են օրական միայն 1-2 ժամ, իսկ 6 ԲՄԿ (22.2%) էլեկտրամատակարարումից զրկված են եղել ընդհանրապես: Բոլոր ամբուլատորիաները, առողջության կենտրոնները և գնահատված 4 պոլիկլինիկայից 3-ը ունեցել են շուրջօրյա էլեկտրամատակարարում: Վարդենիսի ՊԿ-ն էլեկտրամատակարարում ստացել է օրական ընդամենը մեկ ժամով: Գնահատված ԲՄԿ-երի և ամբուլատորիաների կեսից ավելին (համապատասխանաբար 52.0%-ը և 52.9%-ը) և բոլոր երեք ԱԿ-ներն օգտագործել են շարժական էլեկտրական ջեռուցիչներ իրենց սենյակները տաքացնելու համար: Ծխնելույզով վառարաններ օգտագործվել են 7 ԲՄԿ-ում և 5 ամբուլատորիայում: Պոլիկլինիկաները հաճախ ունեցել են կենտրոնացված ջեռուցման համակարգ, և բոլոր ԸՊ կաբինետները ջեռուցվել են ձմռան ընթացքում: Հինգ ԲՄԿ (15.6%) ընդհանրապես ջեռուցում չեն ունեցել, իսկ 10-ը նշել են, որ ձմռան ընթացքում որևէ սենյակ չեն ջեռուցում: 17 գնահատված ամբուլատորիաներից միայն չորսն (23.5%) են ունեցել ավտոմեքենա: ԲՄԿ-երից և ոչ մեկը ավտոմեքենա չի ունեցել: ԱԿ-ները և պոլիկլինիկաներն ունեցել են 1-3 ավտոմեքենա, որոնք հիմնականում օգտագործվել են տնային կանչերի և անհետաձգելի այցերի համար (Հավելված 3):

Ղեղամատակարարումը

ԲՄԿ-երի կողմից սպասարկվող միայն երկու գյուղում (6.3%) և ամբուլատորիաների կողմից սպասարկվող 6 գյուղում (35.3%) են եղել գործող ղեղատներ: Գնահատված բուժհաստատությունների 87.5%-ի (49) համար ղեղերի հիմնական մատակարարը եղել է ԱՆ-ը: Վերջինս բավարարել է անհրաժեշտ ղեղորայքի ցանկում ընդգրկված ղեղերի կարիքի 20-100%-ը: 13 բուժհաստատություններ ղեղեր են ստացել ԱՄԿՈՐ-ից, 3-ը՝ ՄՕԶ-ից, 2-ը՝ ՆՕՎԱ-ից (“Vitrum” հաբեր), 2-ը՝ ՎԿ-ից և 2-ը՝ ԲԱՍ-ից: Այս աղբյուրների կողմից տրամադրվող ղեղերի քանակությունը ծածկել է ղեղերի պահանջարկի 0-100%-ը: ԱՆ-ը ունեցել է առկա կարիքների բավարարման ամենաբարձր մակարդակը (66.6%-ը՝ 1% -100% տատանման տիրույթով), որին հետևել են ՄՕԶ-ը (56.7%-ը՝ 30% - 80% տատանման տիրույթով) և ԱՄԿՈՐ-ը (32.7%-ը՝ 0% - 80% տատանման տիրույթով): Այս աղբյուրներից մատակարարումների հաճախականությունը տատանվել է ամսական մեկ անգամից մինչև տարեկան մեկ անգամի սահմաններում:

Կահույքը և սարքավորումները

Առկա սարքավորումների և դրանց պիտանիության մասին մանրամասն տեղեկություններ են հավաքվել բոլոր գնահատված բուժհաստատություններից: Դրանք ամփոփված են հավելված 4-ում: Այն բուժհաստատություններից, որտեղ գործում են կլինիկական/բիրոքիմիական լաբորատորիաներ, տեղեկություններ են հավաքվել նաև լաբորատոր սարքավորումների մասին (հավելված 5): Ներկայացված ամփոփ տեղեկություններում ներառվել են միայն օգտագործման համար պիտանի սարքավորումները: Թիրախային բուժհաստատություններում առկա կահույքի (օգտագործման համար պիտանի) մասին ըստ հաստատությունների ամփոփ տեղեկությունները ներկայացված են հավելված 6-ում: Ինչպես երևում է աղյուսակներից, գրեթե բոլոր հաստատություններն ունեցել են կահավորման և սարքավորումներով հագեցվածության անբավարար մակարդակ: ԲՄԿ-երի վիճակն այս առումով եղել է ամենածանրը:

Ջրամատակարարում, սանհանգույց (զուգարան)

Գնահատված, որոշակի տարածք ունեցող 27 ԲՄԿ-երից (5-ն ընդհանրապես տարածք չեն ունեցել) 23-ը (85.2%-ը) չեն ունեցել խողովակաշարով ջրամատակարարում: Միայն 2 ԲՄԿ են ունեցել շուրջօրյա ջրամատակարարում (Ներքին Պտղնին Կոտայքի մարզում և Գոշը՝ Տավուշում): Այս տեսանկյունից իրավիճակն ամբուլատորիաներում եղել է համանման. 17-ից 12-ը (70.6%-ը) չեն ունեցել խողովակաշարով ջրամատակարարում, մեկի ջրամատակարարումը եղել է օրական 8 ժամ, իսկ մնացած 4-ինը (23.3%-ը)՝ շուրջօրյա: Մեկ պոլիկլինիկա (Սևան) և մեկ ԱԿ (Արգել) ընդհանրապես չեն ունեցել խողովակաշարով ջրամատակարարում: Մնացածներն ունեցել են կամ կեսօրյա, կամ շուրջօրյա ջրամատակարարում: Գնահատված 51 բուժհաստատությունից 13-ը (25.5%), այդ թվում՝ մեկ ԲՄԿ (Ջորավանը՝ Կոտայքի մարզում) ունեցել են լվացարան՝ հոսող ջրով:

Թեև ԲՄԿ-երի տեղակայման 9 գյուղերում եղել է կոյուղի, միայն 3 ԲՄԿ է կոյուղի ունեցել (Ներքին Պտղնու և Ջորավանի ԲՄԿ-երը Կոտայքի մարզում և Գոշի ԲՄԿ-ը Տավուշի մարզում): 17 ամբուլատորիաներից կոյուղի եղել է միայն 7-ում (բոլոր այն բնակավայրերում, որտեղ եղել է կոյուղի): Բոլոր յոթ առողջության կենտրոններում և պոլիկլինիկաներում եղել է կոյուղի:

Բուժհաստատության ներսում սանհանգույց/զուգարան չի եղել ինը ԳԲԱ-ում (52.9%), 21 ԲՄԿ-ում (77.8%), և մեկ պոլիկլինիկայում (Նոր Հաճնի պոլիկլինիկան՝ Կոտայքի մարզում): Բուժհաստատության ներսում սանհանգույց/զուգարան ունեցող (1-9 հատի սահմաններում) 20 հաստատությունից միայն 13-ում է այն գործել և միայն 10-ում է եղել հոսող ջուր: Առանց զուգարանակոնքի սանհանգույցներ եղել են 8 բուժհաստատությունում (1 ԲՄԿ, 4 ԳԲԱ և 3 պոլիկլինիկա): Ցնցուղ եղել է միայն մեկ ԱԿ-ում (Արգելի ԱԿ): Ջուգարանակոնքով կամ առանց զուգարանակոնքի սանհանգույցների առկայության մասին ըստ հաստատությունների ամփոփ տեղեկությունները ներկայացված են հավելված 3-ում:

Հեռավորություններ և փոխադրամիջոցներ

Թիրախային ԲՄԿ-երի և ԳԲԱ-ների մեծ մասը (համապատասխանաբար, 32-ից 22-ը՝ 68.8%, և 17-ից 13-ը՝ 76.5%) չեն ունեցել իրենց գյուղը մարզկենտրոնի հետ կապող հանրային փոխադրամիջոց: Գյուղերը շրջանային հիվանդանոցների հետ կապող հանրային փոխադրամիջոցի վիճակը եղել է ավելի լավ. 18 ԲՄԿ (56.3%-ը) և 13 ամբուլատորիա (76.5%-ը) նշել են հանրային ավտոբուսի առկայությունը՝ որպես գյուղը շրջանային հիվանդանոցի հետ կապող միջոց: Բացի այդ, 8 ԲՄԿ (25.0%-ը) և 4 ամբուլատորիա (23.5%) նշել են անհետաձգելի դեպքերում շրջանային հիվանդանոցի շտապօգնության մեքենայի առկայությունը: Կապը մոտակա ամբուլատորիայի հետ

իրականացվել է ավտոբուսի միջոցով (թիրախային ԲՄԿ-երի և ամբուլատորիաների 59.2%-ի համար) կամ բացակայել է ընդհանրապես: Մոտակա ԲՄԿ հասնելը եղել է մինչև իսկ ավելի դժվար: Գյուղը մոտակա գործող ԲՄԿ-ի հետ կապող հանրային ավտոբուսի առկայությունը նշել են միայն 21 բուժհաստատություն (42.9%):

Գյուղերը մարզկենտրոնի, շրջկենտրոնի և մոտակա ամբուլատորիայի հետ կապող ճանապարհները հիմնականում նկարագրվել են որպես «ասֆալտ», թեև հաճախ՝ մեծ փոսերով և ցածրորակ: Հաջորդ առավել հաճախ հանդիպող նկարագրությունը եղել է «խորդուբորդ հողը»: 17 բուժհաստատություն այդպես են գնահատել գյուղը մարզկենտրոնի հետ կապող ճանապարհը, և 13 բուժհաստատություն՝ գյուղը շրջկենտրոնի, մոտակա ամբուլատորիայի և ԲՄԿ-ի հետ կապող ճանապարհները: Երկու հաստատություն մարզկենտրոնի հետ կապող ճանապարհը նկարագրել են որպես «մեծ փոսերով հող»: Ճիշտ նույն որակի ճանապարհներով («մեծ փոսերով հող») հինգ հաստատություն կապված են եղել իր շրջկենտրոնի հետ և յոթ հաստատություն՝ մոտակա ամբուլատորիայի և ԲՄԿ-ի հետ: Նորաբակի ԲՄԿ-ը (Գեղարքունիքի մարզ) չի ունեցել հանրային փոխադրամիջոց դեպի մոտակա ամբուլատորիա, իսկ Զովքի ԲՄԿ-ը (Կոտայքի մարզ)՝ դեպի մոտակա ԲՄԿ: Գնահատված ԲՄԿ/ամբուլատորիաների և համապատասխան մարզկենտրոնների միջև միջին հեռավորությունը եղել է 57.9 կմ՝ 14-110 կմ տատանման տիրույթով, դրանց և շրջկենտրոնների միջև՝ 18.2 կմ՝ 3-56 կմ տատանման տիրույթով, այդ հաստատությունների և մոտակա ամբուլատորիաների միջև՝ 10.2 կմ, և դրանց ու մոտակա ԲՄԿ-երի միջև՝ 5.3 կմ: Այս հեռավորությունների և դեպի մարզային ու շրջանային կենտրոններ տանող առկա փոխադրամիջոցների մասին տեղեկությունները ըստ հաստատությունների ներկայացված են հավելված 7-ում:

3.2 Ընտանեկան բժշկություն

Ծրագրի 2-րդ գոտում (Տավուշի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր) գնահատված 56 բուժհաստատությունների բոլոր ԱԱՊ բժիշկներից (n=81) 33-ը (40.7%-ը) անցած 5 տարվա ընթացքում վերապատրաստվել են ԱԱԻ/ԵՊԲՀ-ում, մինչդեռ 18-ը (22.2%-ը) ընդգրկված են եղել ընտանեկան բժշկության (ԸԲ) շարունակական կրթության դասընթացներում, իսկ 14-ը (17.3%-ը) ցանկություն են հայտնել ընդգրկվելու այդ դասընթացներում: Թիրախային հաստատություններում աշխատող ԱԱՊ 205 բուժքույրերի մեկ քառորդից էլ քիչ մասը (47-ը, 22.9%-ը) անցած հինգ տարվա ընթացքում վերապատրաստվել է ԱԱԻ-ում կամ ԲԲԶ-ում, միայն 9 բուժքույր (4.4%-ը) ընդգրկված են եղել ընտանեկան բուժքույրության (ԸԲ) շարունակական կրթման ծրագրում և 81-ը (39.5%-ը) ցանկություն են հայտնել մասնակցել դրան: ԸԲ/ԸԲք դասընթացներում վերապատրաստվածների կամ նման ցանկություն հայտնածների մասին ըստ հաստատությունների տեղեկությունները ներկայացված են Հավելված 8-ում:

Գնահատված հաստատությունների աշխատողներին հարց է տրվել, թե արդյոք իրենք անցած 5 տարվա ընթացքում մասնակցել են հետևյալ թեմաներով կարճաժամկետ կլինիկական վերապատրաստման դասընթացների. առաջին բուժօգնություն, իմունիզացիա, կրծքով սնուցում, սեռավարակներ (ՍԿ), վերարտադրողական առողջություն, մանկական հիվանդությունների ինտեգրված վարում (ՄՀԻԿ), պալարախտ (տուբերկուլյոզ), առողջ ապրելակերպ, առողջ երեխայի աճ և զարգացում, քրոնիկական վիճակների վարում (ՍԻՀ, դիաբետ, քրոնիկ ցավ և այլն) և վարակների կանխարգելում: Այս թեմաներն ընտրվել են, քանի որ դրանք վերջին մի քանի տարվա ընթացքում լայնորեն ուշադրության էին արժանացվել բազմաթիվ կազմակերպությունների կողմից: Տեղեկություններ են հավաքվել նաև այդ նույն ժամանակահատվածում այլ կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների մասնակցության վերաբերյալ:

Հավելված 9-ում ներկայացված են անցած 5 տարվա ընթացքում կարճաժամկետ կլինիկական վերապատրաստման դասընթացների մասնակցած Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերի թիրախային բուժաաստատություններում աշխատող բժիշկների և բուժքույրերի թվերը և տոկոսները՝ ըստ դասընթացների թեմաների:

Բժիշկների շրջանում ամենատարածված դասընթացների թեմաներն են եղել ՄՅԻՎ-ը, իմունիզացիան և սեռավարակները (մասնակցել են համապատասխանաբար բժիշկների 42.0%-ը, 21.0%-ը և 18.5%-ը): Ամենից քիչ տարածված դասընթացների թեմաներն են եղել առողջ ապրելակերպը (2.5%-ը), վարակների կանխարգելումը (4.9%-ը) և պալարախտը (տուբերկուլյոզ) (7.4%-ը): Ընդհանուր առմամբ, բուժաշխատողների ներգրավվածությունը կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներում եղել է բավականին ցածր:

Կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներին բուժքույրերի ընդգրկվածությունը էլ ավելի ցածր է եղել: Նրանց շրջանում առավել տարածված դասընթացների թեմաներն են եղել իմունիզացիան (30.2%), կրծքով սնուցումը (24.9%) և ՄՅԻՎ-ը (24.9%), որին հաջորդել են սեռավարակները (ՍՎ) (15.6%) և վերարտադրողական առողջությունը (14.1%-ը): 205 բուժքույրերից միայն 6-ն (2.9%-ը) են մասնակցել պալարախտի (տուբերկուլյոզ) և 9-ը (4.4%-ը)՝ վարակների կանխարգելման թեմաներով դասընթացների:

Առաջին բուժօգնության վերաբերյալ վերապատրաստման դասընթացները հիմնականում անցկացրել են Հայաստանի Կարմիր խաչի միությունը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՄԱԿ ՄՅ), Ջինիշյան հիմնադրամը և ՄՕԶ-ը: Իմունիզացիայի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներն անցկացրել է ՄԱԿ ՄՅ-ը, ՄՅԻՎ-ի և կրծքով կերակրման վերաբերյալ՝ ՄԱԿ ՄՅ-ը, ԱՄԿՈՐ-ը և ՆՕՎԱ-ն: Սեռավարակների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներն անցկացրել են ՄԱԿ ՄՅ-ը և ՆՕՎԱ-ն, վերարտադրողական առողջության վերաբերյալ՝ Բժիշկներ առանց սահմանի (ԲԱՍ) կազմակերպությունը: Առողջ ապրելակերպի և առողջ երեխայի աճ և զարգացում թեմաներով դասընթացներն անցկացրել են հիմնականում ՆՕՎԱ-ն, Վոլդ Վիժնը (ՎՎ) և ՄԱԿ ՄՅ-ը, պալարախտի (տուբերկուլյոզ) թեմայով՝ ԱԱԻ-ը, ԱՆ-ը, ԱՄԿՈՐ-ը և ՆՕՎԱ-ն: Վարակների կանխարգելման թեմայով դասընթացներն անցկացվել են ՆՕՎԱ-ի, իսկ քրոնիկական վիճակների վարում թեմայով՝ ԱԱԻ-ի և ՎՎ-ի կողմից (հավելված 9):

Անցած հինգ տարիների ընթացքում այլ կարճաժամկետ կլինիկական վերապատրաստման դասընթացներից բուժաշխատողներն առավել հաճախ մասնակցել են աչքի հիվանդությունների, ապահով մայրության/մանկության, որակի կառավարման/բարելավման, բուժքույրերի կլինիկական ունակությունների բարելավման, դեռահասների առողջության, դեղամիջոցների ռացիոնալ օգտագործման և հիվանդների հետազոտության պարակլինիկական եղանակների վերաբերյալ դասընթացների: Որպես նշված դասընթացների կազմակերպիչներ առավել հաճախ նշվել են Հայաստանի ակնաբուժական ծրագիրը, ԱՄՆ ՄԶԳ-ը, ՆՕՎԱ-ն, ՄԱԿ ՄՅ-ը, ԱԱԻ-ը և ՄՕԶ-ը:

Համաշխարհային բանկի կողմից բժիշկների համար կազմված կլինիկական գործունեության ուղեցույցների ամբողջ փաթեթի (17 հատոր) մեկ կամ ավելի օրինակներ եղել են 5 ամբուլատորիաներում (գնահատված 17-ից), 2 ԱԿ-ներում (գնահատված 3-ից, իսկ երրորդում՝ միայն 7 հատոր) և 3 պոլիկլինիկաներում (գնահատված 4-ից, իսկ չորրորդում՝ միայն 15 հատոր): Ինը ամբուլատորիաներում կար ոչ ամբողջական փաթեթ (2-15 հատոր տիրույթում), իսկ մնացած երեքում այն ընդհանրապես բացակայում էր: ՀԲ-ի կողմից բուժքույրերի համար կազմված կլինիկական գործունեության ուղեցույցների ամբողջ փաթեթը (5 հատորներ) կար 4 պոլիկլինիկաներում և միայն մեկ ԱԿ-ում: Երկրորդ ԱԿ-ում կար միայն երկու հատոր, իսկ երրորդում՝ ընդհանրապես չկար: 17 ամբուլատորիաներից 6-ում կար բուժքույրերի համար նախատեսված ուղեցույցների ամբողջական փաթեթ, իսկ 5-ում՝ ոչ ամբողջական (1-4 հատոր): Միայն 3 ԲՄԿ-երում (գնահատված 32-ից) կար ուղեցույցների ամբողջական փաթեթ, 2-ում՝ ոչ ամբողջական (2-ական հատոր յուրաքանչյուրում):

Բուժաշխատողների թիվը՝ ըստ հաստատության տեսակի և ուղեցույցի անձնական օրինակի առկայության, տրված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. 2-րդ գոտու թիրախային բուժհաստատություններում ՉԲ կողմից մշակված կլինիկական գործունեության ուղեցույցներ ունեցող բուժաշխատողների թիվը և տոկոսը (ըստ բուժհաստատությունների տեսակի)

	ԲՄԿ	ԳԲԱ	ԱԿ	ՊԿ	Ընդամենը
Բժիշկների ընդհանուր թիվը, n	1*	27	13	40	81
ՉԲ կողմից բժիշկների համար նախատեսված ուղեցույցներ ունեցող բժիշկների թիվը, n (%)	0	16 (59.3%)	5 (38.5%)	16 (40.0%)	37 (45.7%)
Բուժքույրերի ընդհանուր թիվը, n	42	66	32	65	205
ՉԲ կողմից բուժքույրերի համար նախատեսված ուղեցույցներ ունեցող բուժքույրերի թիվը, n (%)	4 (9.5%)	13 (19.7%)	2 (6.3%)	15 (23.1%)	34 (16.6%)

* Կամարիս ԲՄԿ-ի (Կոտայք) բժիշկը չունի պաշտոնական կարգավիճակ, բայց փաստացիորեն աշխատում էր այնտեղ:

Գնահատված բուժհաստատություններում առկա այլ կլինիկական գործունեության ուղեցույցների թվում հաճախ նշվել են տարբեր կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների (ինունիզացիա, ՄՅԻՎ, ՍՇՅ, փորլուծություն, վերարտադրողական առողջություն) ժամանակ բաշխված տպագիր նյութեր: Գնահատված հաստատություններում առկա թվարկված նյութերի/ուղեցույցների մեծ մասը վերաբերվում էին ինունիզացիային, մանկան խնամքին, հղիությանը և առողջ ապրելակերպին: ԱՄՆ ՄՁԳ Ակնաբուժական ծրագրի կողմից մշակված աչքի հիվանդությունների վարման ուղեցույցը կար չորս հաստատությունում: ՎՎ-ը երեք հաստատությունների տրամադրել էր չափահասների մոտ առավել տարածված հիվանդությունների վերաբերյալ ուղեցույց: Տարբեր կազմակերպությունների (ՋՅՅ, ԱՆ, ԱՄԿՈՐ) կողմից մշակված սեռավարակների վերաբերյալ նյութեր կային չորս հաստատություններում: Սևանի պոլիկլինիկայում կային դիաբետի, զարկերակային գերճնշման և բրոնխիալ ասթմայի վարման վերաբերյալ կլինիկական ուղեցույցներ, որոնք մշակվել են Ամերիկայի միջազգային առողջապահական միության (ԱՄԱՄ) կողմից ֆինանսավորվող համայնքային առողջապահական համագործակցության շրջանակներում: «Արաբկիր» բժշկական կենտրոնը մանկական ինֆեկցիաների և ռախիտի վերաբերյալ մի շարք ուղեցույցներ էր տրամադրել Բալախովիտի և Ծովակի ԳԲԱ-ներին: Որպես կլինիկական ուղեցույցների մշակողներ/տրամադրողներ առավել հաճախ նշված կազմակերպություններն էին ՄԱԿ ՄՅ-ը, ԱՆ-ը, ՆՕՎԱ-ն և ՎՎ-ը, որոնց հաջորդում էին ԱՄԿՈՐ-ն ու ԲԱՍ-ը:

Աղյուսակ 3-ում ամփոփ ներկայացված է թիրախային բուժհաստատություններում ապացուցողական բժշկության (ԱԲ) և դեղերի մասին տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորության մասին տեղեկություն:

Աղյուսակ 3. ԱԲ նյութերից և դեղերի մասին տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորության առկայությունը 2-րդ գոտու թիրախային հաստատություններում

	ՊԿ (n=4)	ԱԿ (n=3)	ԳԲԱ (n=17)	ԲՄԿ (n=32)
Ինտերնետ	1.0	1.0	1.0	1.0
Բժշկական ամսագրեր	2.0	1.0	7.0	2.0
Վերապատրաստման թարմ նյութեր	4.0	2.0	9.0	16.0
Պարբերականներ	2.0	0.0	5.0	3.0
ԱԲ հրատարակություններ	1.0	0.0	1.0	1.0
Բժշկական գրքեր (տպագրված 2000թ-ից ի վեր հրատարակված)	1.0	0.0	9.0	9.0
Մաշկովսկի, «Դեղամիջոցներ»	2.0	1.0	4.0	1.0
Վիդալ, «Դեղերի ուղեցույց»	2.0	1.0	5.0	0.0
Վիդալ, «Դեղերի ուղեցույց Անդրկովկասի համար»	4.0	0.0	3.0	0.0
Դեղաբուժության օպտիմալ սխեմաների ձեռնարկ, ՀՀ ԱՆ ԴԲՏԳ	2.0	0.0	2.0	0.0
Հայկական ազգային ֆորմուլյար	1.0	0.0	1.0	0.0

Ինչպես երևում է աղյուսակից, հաստատությունների մեծ մասն ուներ վերապատրաստման թարմ նյութեր: Բժշկական ամսագրերը, ԱԲ հրատարակությունները և 2000թ. ի վեր հրատարակված բժշկական գրքերն ավելի քիչ էին: Բոլոր հաստատություններում սահմանափակ էր ինտերնետից օգտվելու հնարավորությունը: Հետաքրքրաշարժ է այն փաստը, որ բժշկական ամբուլատորիաներում որոշ տեղեկատվական աղբյուրներից (բժշկական ամսագրեր, պարբերականներ, բժշկական գրքեր) օգտվելու հնարավորությունն ավելի մեծ էր, քան առողջության կենտրոններում:

Դեղերի մասին տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորությունը նույնպես սահմանափակ էր: Պոլիկլինիկաներն ավելի լավ են մատակարարվում այդ աղբյուրներով, քան մյուս բուժհաստատությունները: Դեղերի մասին տեղեկատվության առավել տարածված աղբյուրներն են Մաշկովսկու «Դեղամիջոցներ» և Վիդալի «Դեղերի ուղեցույց» հրատարակությունները: Մի քանի հաստատությունների ղեկավարներ/պատասխանատուներ նշել են դեղերի մասին տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու հնարավորության մասին, որոնք նշված չեն եղել հարցաշարում, այն է՝ «Ռեմեդիա», «Դեղորայք և բժշկություն, ԱՆ» և «Բուսական դեղագործության ազգային մատյան», և այլն:

Բոլոր գնահատված հաստատությունները վարել են մինչև 18 տարեկանների բժշկական քարտեր: Այդ քարտերով ընդգրկված են եղել այս տարիքային խմբի 96.3%-ը (ստանդարտ շեղումը՝ 9.0%): Այդ քարտերում գրանցված տեղեկությունները գնահատվել են «լիարժեք» գնահատված հաստատությունների 51.8%-ում. ԲՄԿ-երի 38.7%-ում, ամբուլատորիաների 62.5%-ում և ՊԿ/ԱԿ-ների 100 %-ում (այս գնահատումը կատարվել է սուբյեկտիվորեն՝ հարցազրուցավարի կողմից): Գնահատված հաստատությունների 67.9%-ը (ԲՄԿ-երի 59.4%-ը, ամբուլատորիաների 88.2%-ը, ԱԿ-ների 66.7%-ը և ՊԿ-ների 50.0%-ը) կիրառել է ստանդարտ ձևի բժշկական քարտեր:

Մեծահասակ (≥18 տարեկան) բնակչության համար բժշկական քարտեր լրացվել են գնահատված ամբուլատորիաների, պոլիկլինիկաների և ԱԿ-ների 100%-ում, իսկ ԲՄԿ-երի՝ 78.1%-ում (7 ԲՄԿ չէին լրացնում այդ ձևերը): Մեծահասակ բնակչության ընդգրկվածությունն այդ քարտերով ավելի փոքր է եղել. միջինում՝ 64.5% (ստանդարտ շեղումը՝ 28.3%): Ընդգրկվածությունն ամենաբարձրն է եղել առողջության կենտրոններում և պոլիկլինիկաներում (86.7%-ում), որոնց հաջորդել են ամբուլատորիաները (72.5%) և ԲՄԿ-երը (56.6%): Քարտերում գրանցված

տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» գնահատված հաստատությունների 23.2%-ում (ԲՄԿ-երի 16.7%-ում, ամբուլատորիաների 43.8%-ում և պոլիկլինիկաների/ԱԿ-ների 33.3%-ում): ԲՄԿ-երի մոտ 64.0%-ը, ամբուլատորիաների 82.4%-ը և բոլոր պոլիկլինիկաները/ԱԿ-ները կիրառել են բժշկական քարտերի ստանդարտ ձևեր:

32 ԲՄԿ-երից 26-ը (81.3%-ը) վարել են ամբուլատոր այցերի մատյաններ, իսկ 12-ը (37.5%-ը)՝ տնային այցերի մատյաններ: Ամբուլատոր այցերի մատյաններում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 11 ԲՄԿ-երում (34.4%-ում), իսկ տնային այցերի մատյաններում գրանցումները՝ 8 ԲՄԿ-երում (25.0%-ում): Բոլոր գնահատված ԱԿ-ները և 17-ից 16 ամբուլատորիաները վարել են ամբուլատոր այցերի մատյաններ, սակայն տնային այցերի մատյանները բացակայել են 6 ամբուլատորիայում: Ամբուլատոր այցերի մատյաններում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 11 ամբուլատորիայում (64.7%-ում) և 2 ԱԿ-ում (66.7%-ում): Տնային այցերի մատյաններում գրանցված տեղեկությունները ավելի սակավ դեպքերում են գնահատվել լիարժեք՝ միայն 5 ամբուլատորիայում (29.4%-ում) և 2 ԱԿ-ում: Բոլոր գնահատված պոլիկլինիկաներն ունեցել են լիարժեք տեղեկություններով ամբուլատոր այցերի մատյաններ, սակայն միայն 2-ն են ունեցել տնային այցերի մատյաններ:

Պատվաստման ձևերն առկա են եղել գնահատված բոլոր ԲՄԿ-երում, ամբուլատորիաներում, ԱԿ-ներում և պոլիկլինիկաներում: Այս ձևերում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 31 ԲՄԿ-ում (96.9%-ում) և բոլոր ամբուլատորիաներում, ԱԿ-ներում և պոլիկլինիկաներում: Պատվաստման ստանդարտ ձևեր կիրառվել են 30 ԲՄԿ-ում (93.8%-ում) և գնահատված մյուս երեք տեսակի բոլոր հաստատություններում: Այս ձևերի միջոցով համապատասխան բնակչության ընդգրկվածությունը եղել է 92.4% ԲՄԿ-երում և գրեթե 100.0% ամբուլատորիաներում, ԱԿ-ներում և պոլիկլինիկաներում:

ԲՄԿ-երից և ոչ մեկը, 4 ամբուլատորիա (23.5%-ը), բոլոր առողջության կենտրոնները և երկու պոլիկլինիկա (50%-ը) վարել են շտապ օգնության կանչերի մատյաններ: Դրանցում պարունակվող տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք» 3 ամբուլատորիայում (17, 6%-ում), մեկ ԱԿ-ում և մեկ պոլիկլինիկայում:

Միայն 3 ԲՄԿ-երում (9.4%-ում) և 6 ամբուլատորիաներում (35.3%-ում) են եղել հղիների հսկողության քարտեր: Պատկերն զգալիորեն տարբերվել է ԱԿ-ներում և պոլիկլինիկաներում. գնահատված բոլոր 7 հաստատություններում վարել են այդ քարտերը: Գերակշռող մեծամասնության դեպքերում կիրառվել են քարտերի ստանդարտ ձևերը և դրանցում գրանցված տեղեկությունները գնահատվել են որպես «լիարժեք»:

Գնահատված որևէ հաստատությունում չի եղել որակի ապահովման գործող մեխանիզմ:

Անցած երեք ամիսների ընթացքում վերահսկողները միջինում 2.7 (ստանդարտ շեղումը՝ 2.9) վերահսկողական այց են կատարել ԲՄԿ: 6 ԲՄԿ (18.8%՝ Սարալանջը, Տեղենիքը և Կաթնաղբյուրը՝ Կոտայքի, Լուսահովիտը՝ Տավուշի և Նորաբակն ու Գագարինավանը Գեղարքունիքի մարզերում) նշել են, որ իրենց հաստատություն վերահսկողական այցեր չեն կատարվել անցած եռամսյակի ընթացքում, իսկ 5 ԲՄԿ (15.6%-ը) նշել են, որ այդ ընթացքում կատարվել է միայն մեկ վերահսկողական այց: 17 ամբուլատորիաներից 12-ը նշել են, որ բուժհաստատությունն անմիջականորեն վերահսկվում է դրսից: Այս հաստատություններ կատարված վերահսկողական այցերի միջին թիվը վերջին եռամսյակում կազմել է 1.75 (ստանդարտ շեղումը՝ 1.77):

ԲՄԿ-երից ոչ մեկում չի եղել համակարգիչ, մինչդեռ 17 ամբուլատորիաներից 8-ը նշել են, որ ունեն առնվազն մեկ համակարգիչ: 2 ամբուլատորիա ունեցել են չգործող համակարգիչներ: Բոլոր առողջության կենտրոնները և 4 պոլիկլինիկայից 3-ն ունեցել են գործող համակարգիչներ: Միայն Վարդենիսի պոլիկլինիկան չի ունեցել համակարգիչ: Գեղարքունիքի մարզի Սևան պոլիկլինիկան ունեցել է չորս գծող

համակարգիչ, և Իջևանի Սոր և մանկան կենտրոնը (Տավուշի մարզ)՝ երեք գործող համակարգիչ: Մեկ ամբուլատորիա (Բալահովիտ՝ Կոտայքի մարզ,) և երկու ԱԿ (Գառնի և Բյուրեղավան՝ Կոտայքի մարզ) նշել են, որ ունեն համակարգչային ծրագիր կլինիկական տվյալների մուտքագրման և վերլուծության համար: Մերգեյանի գիտահետազոտական ինստիտուտը տրամադրել է այդ ծրագիրը նրանցից երկուսին (Բալահովտի ամբուլատորիային և Գառնու ԱԿ-ին), իսկ ՊԱԳ-ը՝ երրորդին (Բյուրեղավանի ԱԿ-ին): Բուժաշխատողների շրջանում եղել են կլինիկական դասավանդողներ երեք բուժհաստատությունում (մեկական՝ յուրաքանչյուրում)՝ Գառնու ԱԿ-ում, Նոր Հաճնի ԱԿ-ում և Բալահովտի ամբուլատորիայում (բոլորը Կոտայքի մարզում):

3.3 Ազատ հավաքագրում, ֆինանսավորում և կառավարում

Գնահատված ոչ մի հաստատություն չի նշել, որ ունի ազատ հավաքագրման համար համակարգչային ծրագիր կամ դրա համար վերապատրաստված օպերատորներ: Հետևաբար, 2006թ. ընթացքում այդ հաստատություններում ոչ ոք չի գրանցվել ազատ հավաքագրմամբ:

Հարցաթերթիկի «Ֆինանսավորում և կառավարում» բաժնում ներառված հարցերը վերաբերվել են միայն այն բուժհաստատություններին, որոնք ունեն անկախ իրավաբանական անձի կարգավիճակ: Այդպիսի հաստատությունները եղել են տասը՝ երեք ԳԲԱ (Բալահովիտը՝ Կոտայքի, Պառավաքարը՝ Տավուշի և Դոմաշենը՝ Գեղարքունիքի մարզերում), երեք ԱԿ և չորս պոլիկլինիկա:

Միայն երկու պոլիկլինիկա (Նոր Հաճնը՝ Կոտայքի և Իջևանի մոր և մանկան կենտրոնը՝ Տավուշի մարզերում) և մեկ ամբուլատորիա (Դոմաշենը) նշել են, որ պարբերաբար հաշվարկում են իրենց բուժհաստատությունում մատուցվող ծառայությունների միավորի ինքնարժեքը: Պառավաքարի ամբուլատորիան նշել է, որ երբեմն կատարում է այդպիսի հաշվարկ: Մնացած 6 բուժհաստատություններում (1 ամբուլատորիա, 3 ԱԿ և 2 պոլիկլինիկա) մատուցվող ծառայությունների միավորի ինքնարժեքի հաշվարկ չի կատարվել հետևյալ բացատրությամբ. «Հիվանդների համար ծառայություններն անվճար են, իսկ դրանց ինքնարժեքը հաշվարկված է ՊԱԳ կողմից»: Հաստատություններից ոչ մեկը չի ունեցել հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր, իսկ մեկ ամբուլատորիա (Պառավաքար, Տավուշի մարզ) նպատակահարմար չի համարել հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի ներդրումը հաստատությունում:

Բոլոր բուժհաստատություններում հաշվապահն ունեցել է հաշվապահական կրթություն: Աղյուսակ 4-ում ամփոփ ներկայացված են անցած 5 տարվա ընթացքում հաշվապահների ստացած վերապատրաստումների և նրանց հետագա ուսուցման կարիքների մասին տվյալները: Արմաուդիտը և IAB կենտրոնը նշվել են որպես այդ դասընթացների հիմնական իրականացնողներ:

Աղյուսակ 4. Վերջին 5 տարվա ընթացքում ԱԱՊ բուժհաստատությունների (պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ և ԱԿ-ներ, n=10) հաշվապահների ստացած վերապատրաստումները և հետագա ուսուցման կարիքները

	Վերապատրաստված հաշվապահների թիվը	Վերապատրաստման միջին տևողությունը (շաբաթ)	Հետագա ուսուցման կարիք ունեցողների թիվը
1. Ֆինանսական կառավարում	0	0.0	2
2. Ինքնարժեքի հաշվառում	2	2.5	2
3. Ֆինանսական հաշվառում	2	4.5	3
4. Համակարգչային ուսուցում	1	5.0	3
5. Հարկային օրենսդրություն	2	3.0	3
6. Աշխատանքային օրենսդրություն	1	0.5	3
7. (Այլ) Հաշվառում	3	3.3	1

Աղյուսակ 5-ում ներկայացված են տեղեկություններ ամբուլատորիաների, ԱԿ-ների և պոլիկլինիկաների տնօրենների մասնակցությամբ անցկացված վերապատրաստման դասընթացների վերաբերյալ: Որպես այս դասընթացներն իրականացնող կազմակերպություն առավել հաճախ նշվել է ՆՕՎԱ-ն (մասնավորապես, առողջապահության կառավարում, ֆինանսական կառավարում, հարկային և աշխատանքային օրենսդրություն թեմաներով), որին հաջորդել է ԱԱԻ-ը (առողջապահության տնտեսագիտություն և այլն): Որոշ փոխտնօրեններ (Սևանի և Նոր Հաճնի պոլիկլինիկաներ) ևս մասնակցել են վերապատրաստման դասընթացների:

Երեք հաստատություն (30.0%-ը) նշել են, որ կատարում են եկամուտների հաշվառում, իսկ 8 հաստատություն (80.0%-ը) նշել են, որ կատարում են ծախսերի հաշվառում՝ ըստ ստորաբաժանումների:

Աղյուսակ 5. Վերջին 5 տարվա ընթացքում ԱԱՊ բուժհաստատությունների տնօրենների (n=10) ստացած վերապատրաստումները և հետագա ուսուցման կարիքները

<i>Դասընթացի թեման</i>	Վերապատրաստվածների թիվը	Վերապատրաստման միջին տևողությունը (շաբաթ)	Հետագա ուսուցման կարիք ունեցողների թիվը
1. Առողջապահության կառավարում	9	4.3	8
2. Առողջապահության տնտեսագիտ.	3	3.7	3
3. Ֆինանսական կառավարում	4	1.9	6
4. Ինքնարժեքի հաշվառում	0	0.0	3
5. Հաշվապահության հիմունքներ	1	1.0	3
6. Հարկային օրենսդրություն	2	0.5	6
7. Աշխատանքային օրենսդրություն	3	1.5	4
8. Համակարգչային ուսուցում	0	0.0	4
9. (Այլ) Առողջապահության կազմակերպում և կառավարում	1	3.3	1

Աշխատուժի պլանավորում

2006թ. և 2007թ. փետրվար և մարտ ամիսների ընթացքում թիրախային բուժհաստատությունների ԱԱՊ բժիշկներին կատարած այցերի թվերը և բուժաշխատողների տնային այցերի թվերը ներկայացված են համապատասխանաբար

